ԱՆԼԻՄ ՕՖԻՍ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ՓԱԹԵԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Բաժանորդը, միանալով Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթին, պարտավորվում է մեկ տարի շարունակ մնալ Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթի բաժանորդ և ինտերնետ ծառայությունների (այսուհետ՝ Ծառայություններ) մատուցման պահից սկսած առաջին ամսվա ընթացքում Ծառայությունները ստանում է անվճար,

2 Ինտերնետի այլ սակագնային փաթեթների (բացառությամբ Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթի Բաժանորդների) Բաժանորդները նույնպես կարող են անցում կատարել Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթին և Ծառայություններից օգտվել սույն պայմաններով:

3. Հնարավոր է իրականացնել Անլիմ օֆիս սակագնային փաթեթի փոփոխություն՝ անցում կատարելով Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթին: Տվյալ գործարքն իրականացվում է Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթին 1 տարով բաժանորդագրության պայմանով, և տվյալ դեպքում Բաժանորդի վրա տարածվում են Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթին 1 տարով բաժանորդագրության բոլոր պայմանները:

4. Հնարավոր է իրականացնել Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթի որևէ սակագնի փոփոխություն՝ անցում կատարելով Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթի մեկ այլ սակագնի: Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթի Բաժանորդները Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթին բաժանորդագրության պարտադիր ժամկետի ընթացքում հնարավորություն ունեն փոխել ընթացիկ սակագինը՝ անցում կատարելով Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթի միայն ավելի բարձր ամսավճարով սակագնի:

Սույն կետով սահմանված կերպով փոխելով ընթացիկ սակագինը՝ Բաժանորդը չի ստանում Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթի նոր սակագնին բաժանորդագրության դեպքում տրամադրվող 1(մեկ) ամիս անվճար ծառայությունը: Նոր սակագնին անցումը չի երկարացնում Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթով սահմանված պարտադիր բաժանորդագրության ժամկետը:

Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթին բաժանորդագրության պարտադիր ժամկետի ավարտից հետո Բաժանորդները հնարավորություն են ստանում փոխելու ընթացիկ սակագինը՝ անցում կատարելով Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթի թե ավելի բարձր, թե ավելի ցածր ամսավճարով սակագնի:

Եթե Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթից օգտվելու համար սահմանված պարտադիր ժամկետն ավարտվել է, ապա սույն կետով սահմանված կերպով սակագնային փաթեթի փոփոխության դեպքում Բաժանորդը չի ստանում նոր սակագնին բաժանորդագրության դեպքում տրամադրվող 1 ամիս անվճար ծառայությունը, ինչպես նաև չի պարտավորվում մեկ տարի շարունակ օգտվել Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթից:

5. Հնարավոր է իրականացնել Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթի փոփոխություն՝ անցում կատարելով Անլիմ օֆիս սակագնային փաթեթին: Տվյալ գործարքն իրականացվում է Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթի վաղաժամ դադարեցման պայմանով, և այն իրականացվում է միայն Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթի վաղաժամ դադարեցման դեպքում սահմանված տուգանքների վճարումից հետո:

Եթե սույն կետով սահմանված կերպով սակագնային փաթեթի փոփոխությունն իրականացվում է Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթից օգտվելու համար սահմանված պարտադիր ժամկետի ավարտից հետո, ապա այն իրականացվում է առանց տուգանքների վճարման:

6 Եթե Բաժանորդը դադարեցնում է Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթին բաժանորդագրությունը մինչև սահմանված ժամկետի ավարտը կամ Բաժանորդի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու հետևանքով ծառայությունը մինչև սահմանված ժամկետի ավարտը կասեցվում է Օպերատորի կողմից, ապա Բաժանորդը Օպերատորին վճարում է տուգանք, որը հաշվարկվում է Ծառայության ակտիվացման ամսաթվի դրությամբ ակտիվացված Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթի համար սահմանված պարտադիր գործողության ընթացքում բաժանորդի կողմից վճարվելիք գումարի (ակտիվացված սակագնային փաթեթի ամսավճար ներառյալ ԱԱՀ * 11) և նախքան Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթի դադարեցումը Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթի շրջանակում հաշվեգրված գումարի տարբերության 80%-ի չափով:

Սույն կետով սահմանված կերպով փոխելով ընթացիկ սակագինը՝ Բաժանորդը չի ստանում Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթի նոր սակագնին բաժանորդագրության դեպքում տրամադրվող 1(մեկ) ամիս անվճար ծառայությունը: Նոր սակագնին անցումը չի երկարացնում Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթով սահմանված պարտադիր բաժանորդագրության ժամկետը:

Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթին բաժանորդագրության պարտադիր ժամկետի ավարտից հետո Բաժանորդները հնարավորություն են ստանում փոխելու ընթացիկ սակագինը՝ անցում կատարելով Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթի թե ավելի բարձր, թե ավելի ցածր ամսավճարով սակագնի:

Չի թույլատրվում իրականացնել Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթի փոփոխություն՝ անցում կատարելով Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթի մեկ այլ սակագնի, եթե Անլիմ օֆիս ժամկետային գործող սակագնային փաթեթից օգտվելու պարտադիր ժամկետն ավարտվել է: Եթե Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթից օգտվելու համար սահմանված պարտադիր ժամկետն ավարտվել է, ապա սույն կետով սահմանված կերպով սակագնային փաթեթի փոփոխության դեպքում Բաժանորդը չի ստանում նոր սակագնին բաժանորդագրության դեպքում տրամադրվող 1 ամիս անվճար ծառայությունը, ինչպես նաև չի պարտավորվում մեկ տարի շարունակ օգտվել Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթից:

8. Բաժանորդը կարող է ժամանակավորապես կասեցնել Ծառայությունների մատուցումը՝ Օպերատորի կողմից էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններով սահմանված կարգով: Ծառայությունների մատուցման ժամանակավոր կասեցման և/կամ վճարումների ուշացման պատճառով Ծառայությունների մատուցման կասեցման դեպքում Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթի պարտադիր գործողության ժամկետը երկարաձգվում է կասեցման ժամանակահատվածի տևողությամբ:

Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթին բաժանորդագրության պարտադիր ժամկետը համարվում է ավարտված այն դեպքում, եթե Բաժանորդը օգտվել է Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթից բաժանորդագրության օրվանից սկսած տասներկու օրացուցային ամիս:

9. Օպերատորի և Բաժանորդի միջև բոլոր այն հարաբերությունները, որոնք կարգավորված չեն սույն պայմաններով, կարգավորվում են Օպերատորի կողմից հրապարակված և Բաժանորդի կողմից ժամկետային պայմանագիրը կնքելու պահին գործող խմբագրությամբ էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններով, ինչպես նաև Օպերատորի կողմից հրապարակված ցանկացած այլ պայմաններով, որոնք չեն հակասում սույն պայմաններին:

10. Սույն պայմաններում բոլոր հասկացությունները կիրառվում են Օպերատորի կողմից էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններով սահմանված իմաստով